ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՀՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԼԻԼԻԹ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ *lilitmanukyan2000@gmail.com*

DOI: 10.24234/scientific.v3i53.392

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության են առնվում բուհում ուսանողների սոցիալականացման գործընթացի կառավարման արդյունավետության բարձրացման տեսական, կազմակերպական և մանկավարժական ուղիները:

Տեսական վերլուծության հիման վրա համակարգվել են սոցիալականացման կառավարման համակարգային-ռազմավարական, էկոհամակարգային, ուսանողակենտրոն և մասնակցային, մենթորական, անհատականացված, թվային, տվյալահեն, համագործակցային և արժեքահեն ուղիները:

Առաջադրվում է հեղինակային մոտեցում, որի համաձայն սոցիալականացման կառավարումն արդյունավետ է այն դեպքում, երբ նշված ուղղությունները ներառվում են մեկ միասնական փուլային-ցիկլային համակարգում՝ ախտորոշումից և նպատակադրումից մինչև մշտադիտարկում, կառավարչական ճշգրտում, ինքնակարգավորում և մասնագիտական ինքնորոշում:

Հիմնավորվում են նաև գործընթացի արդյունավետությունն ապահովող կազմակերպական-մանկավարժական պայմանները և կառավարման մեխանիզմները:

Բանալի բառեր՝ *ուսանողների սոցիալականացում, սոցիալականացման կառավարում, բուհական միջավայր, ուսանողական ներգրավվածություն, մասնակցային կառավարում, մենթորություն, բուհական պատկանելիություն, թվային սոցիալականացում, մասնագիտական ինքնություն*:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության ժամանակակից առաքելությունը չի սահմանափակվում մասնագիտական գիտելիքների և կարողությունների փոխանցմամբ: Բուհը միաժամանակ հանդես է գալիս որպես սոցիալական, մշակութային և մասնագիտական միջավայր, որտեղ ուսանողը յուրացնում է սոցիալական դերեր, ձևավորում է փոխհարաբերությունների փորձ, արժեքային կողմնորոշումներ, քաղաքացիական դիրքորոշում և մասնագիտական ինքնություն:

Այս համատեքստում ուսանողների սոցիալականացումը ձեռք է բերում կառավարչական նշանակություն: Այն այլևս նպատակահարմար չէ դիտարկել միայն որպես ուսանողի ինքնաբուխ հարմարում նոր միջավայրին: Սոցիալականացման բարդ և բազմամակարդակ բնույթը պահանջում է նպատակադրում, կազմակերպում, համակարգում, աջակցություն, մշտադիտարկում, գնահատում և կառավարչական ճշգրտում:

Բրոնֆենբրենների էկոլոգիական մոտեցումը հնարավորություն է տալիս անձի զարգացումը դիտարկել փոխկապակցված միջավայրային համակարգերի ազդեցության ներքո (Bronfenbrenner, 1979), իսկ Ա. Բանդուրայի սոցիալ-ճանաչողական տեսության մեջ շեշտադրվում են սոցիալական փոխազդեցության, անձնական նախաձեռնողականության և ինքնակարգավորման մեխանիզմները (Bandura, 2001):

Բարձրագույն կրթությունում սոցիալականացման տեսությունները ուսանողի զարգացումը կապում են ակադեմիական և սոցիալական համակարգերում ինտեգրման, համապատասխան դերերի, նորմերի և մասնագիտական ինքնության յուրացման հետ (Weidman, DeAngelo, 2020): Ուստի սոցիալականացումը ընդգրկում է ուսանողի բուհական ամբողջ կենսափուլը՝ ընդունելությունից մինչև մասնագիտական ինքնորոշում և աշխատանքի շուկա անցում:

Ուսանողական ներգրավվածությունն այդ գործընթացի առանցքային գործոններից է: Ա. Ասթինի ներգրավվածության տեսության համաձայն՝ ուսանողի զարգացման արդյունքները պայմանավորված են այն ֆիզիկական և հոգեբանական էներգիայով, որը նա ներդնում է բուհական գործունեության մեջ (Astin, 1984): Ջ. Կուհի ուսումնասիրությունները նույնպես ցույց են տալիս համագործակցային, նախագծային, հետազոտական և փորձառական կրթական գործունեության բարձր սոցիալականացնող ներուժը (Kuh, 2008):

Առանձնահատուկ նշանակություն ունի նաև բուհական պատկանելիության զգացումը: Մ. Ահնի և Հ. Դևիսի ուսումնասիրություններում այն դիտարկվում է որպես բազմաչափ կառուցվածք, որը ձևավորվում է միջանձնային կապերի, ակադեմիական ներգրավվածության, սոցիալական միջավայրի և բուհական համայնքի հետ նույնականացման արդյունքում (Ahn, Davis, 2020):

Այս դրույթները հնարավորություն են տալիս սոցիալականացման գործընթացը դիտարկել որպես բարձրագույն կրթության կառավարման ինքնուրույն օբյեկտ, որն

ունի նպատակներ, սկզբունքներ, սուբյեկտներ, փուլեր, կառավարման մեխանիզմներ, չափանիշներ և ակնկալվող արդյունքներ:

Հետազոտության նպատակն է տեսականորեն հիմնավորել և համակարգել բուհում ուսանողների սոցիալականացման արդյունավետ կառավարման հիմնական ուղիները, բացահայտել դրանց իրականացման կազմակերպական-մանկավարժական պայմաններն ու կառավարման մեխանիզմները:

Հետազոտության գիտական նորույթը բուհում ուսանողների սոցիալականացման կառավարման ուղղությունների, կազմակերպական-մանկավարժական պայմանների և կառավարման մեխանիզմների փոխկապակցված համակարգի հիմնավորման մեջ է:

Մեր գիտական դիրքորոշումն այն է, որ սոցիալականացման արդյունավետ կառավարումը չի կարող սահմանափակվել առանձին միջոցառումների կազմակերպմամբ: Այն պետք է ձևավորվի որպես բուհի կրթական կառավարման ամբողջական ենթահամակարգ, որտեղ կառավարչական որոշումները հիմնվում են ուսանողի սոցիալական զարգացման վերաբերյալ տվյալների վրա, իսկ ուսանողն աստիճանաբար կառավարման օբյեկտից վերածվում է սոցիալականացման ակտիվ սուբյեկտի և սեփական զարգացման համակառավարողի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն ունի տեսական-վերլուծական բնույթ: Կիրառվել են գիտական գրականության տեսական և համեմատական վերլուծության, բովանդակային վերլուծության, համակարգման, ընդհանրացման և մանկավարժական մոդելավորման մեթոդները:

Մեթոդաբանական հիմքը կազմել են էկոլոգիական, սոցիալ-ճանաչողական, սոցիոմշակութային, համակարգային, գործունեային, ուսանողակենտրոն և մասնակցային մոտեցումները:

Վերլուծությունը կառուցվել է «կառավարման ուղղություն → կազմակերպական-մանկավարժական պայման → կառավարման մեխանիզմ → գնահատման ցուցիչ → հետադարձ կապ → կառավարչական ճշգրտում» տրամաբանությամբ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Բուհում ուսանողների սոցիալականացման գործընթացի կառավարման վերաբերյալ տեսական մոտեցումների համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա արդյունավետությունը չի կարող ապահովվել մեկ առանձին կառավարչական կամ մանկավարժական միջոցի կիրառմամբ: Սոցիալականացումը բազմաբաղադրիչ և շարունակական գործընթաց է, որի արդյունավետ կառավարումը պահանջում է բուհի ռազմավարական նպատակների, կրթական միջավայրի, ուսանողների մասնակցության, մանկավարժական աջակցության, թվային փոխգործակցության, մշտադիտարկման և արտաքին գործընկերության փոխկապակցվածություն:

1. Կատարված տեսական վերլուծության և ուսումնասիրված մոտեցումների համակարգման հիման վրա առանձնացրել ենք բուհում ուսանողների սոցիալականացման գործընթացի արդյունավետ կառավարման հիմնական ուղիները:Ստորև ներկայացվում և հիմնավորվում են այդ հիմնական ուղիները:

2. Համակարգային-ռազմավարական կառավարում

Բուհում ուսանողների սոցիալականացման գործընթացի արդյունավետ կառավարումը նախ և առաջ պահանջում է այն դիտարկել որպես բուհի զարգացման ընդհանուր ռազմավարության բաղադրիչ: Ռազմավարական մոտեցումը ենթադրում է ոչ միայն սոցիալականացման ընդհանուր նպատակի ձևակերպում, այլև երկարաժամկետ և միջնաժամկետ առաջնահերթությունների սահմանում, ակնկալվող արդյունքների կանխատեսում, պատասխանատու կառույցների և դերակատարների գործառույթների հստակեցում, անհրաժեշտ ռեսուրսների պլանավորում, իրականացման փուլերի որոշում և արդյունքների գնահատման չափանիշների ու ցուցանիշների մշակում:

3. Այս համատեքստում սոցիալականացման ռազմավարական կառավարումը պետք է ուղղված լինի ուսանողի բուհական հարմարման, սոցիալական և ակադեմիական ներգրավվածության, բուհական պատկանելիության, մասնագիտական ինքնության, քաղաքացիական պատասխանատվության և ինքնակարգավորման հետևողական զարգացման ապահովմանը:

4. Ռազմավարական կառավարման կարևոր բաղադրիչ է նաև հնարավոր սոցիալական ռիսկերի՝ ուսանողների մեկուսացման, ներգրավվածության նվազման, բուհական միջավայրից օտարման, սոցիալական հարմարման դժվարությունների վաղ կանխատեսումը և դրանց հաղթահարման կանխարգելիչ միջոցների ծրագրավորումը:

5. Մ. Ֆուլանի կրթական փոփոխությունների մոտեցումը ցույց է տալիս, որ կայուն արդյունք ապահովող փոփոխությունները պետք է ոչ թե մնան առանձին նախաձեռնությունների մակարդակում, այլ ինտեգրվեն հաստատության կազմակերպական մշակույթին և կառավարման համակարգին(Fullan, 2016)::

6. Այսպիսով, համակարգային-ռազմավարական կառավարումը հնարավորություն է տալիս սոցիալականացման առանձին միջոցառումները փոխակերպել երկարաժամկետ նպատակներով, հստակ առաջնահերթություններով, ռեսուրսներով, պատասխանատվության բաշխմամբ, գնահատման ցուցանիշներով և հետադարձ կապով գործող ամբողջական կառավարման համակարգի:

2. Սոցիալ-կրթական էկոհամակարգի զարգացում և կառավարում

Բուհում ուսանողների սոցիալականացման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այն սոցիալ-կրթական միջավայրով, որտեղ իրականացվում են ուսումնական, հաղորդակցական, հասարակական և մասնագիտական փոխազդեցությունները: Այդ պատճառով սոցիալականացման կառավարման կարևոր

ուղղություններից է բուհական միջավայրի՝ որպես փոխկապակցված սոցիալական էկոհամակարգի նպատակային ձևավորումն ու զարգացումը:

Ու. Բրոնֆենբրեննների էկոլոգիական տեսության համաձայն՝ անձի զարգացումը պայմանավորված է տարբեր մակարդակների միջավայրային համակարգերի և դրանց փոխազդեցությունների բնույթով (Bronfenbrenner, 1979): Բուհական միջավայրում այդ համակարգի բաղադրիչներն են ուսանողները, դասախոսները, վարչական անձնակազմը, ուսանողական կառույցները, ընտանիքը, համայնքը, գործատուները և այլ արտաքին շահակիցներ:

Կառավարման տեսանկյունից խնդիրը միայն նպաստավոր միջավայրի առկայությունը չէ: Անհրաժեշտ է նպատակային նախագծել և համակարգել այդ միջավայրի սոցիալականացնող ներուժը՝ ապահովելով տարբեր դերակատարների միջև համագործակցություն, վստահություն, փոխօգնություն, ներառականություն, հաղորդակցական անվտանգություն և ուսանողի լիարժեք մասնակցության հնարավորություններ:

Այսպիսով, սոցիալ-կրթական էկոհամակարգի զարգացումն ու կառավարումը նշանակում են բուհական միջավայրը դարձնել նպատակային կառավարվող սոցիալականացման տարածք, որտեղ ուսանողի ակադեմիական, սոցիալական և մասնագիտական զարգացումը ապահովվում է միջավայրի տարբեր բաղադրիչների փոխկապակցվածությամբ:

3. Ուսանողակենտրոն և մասնակցային կառավարում

Սոցիալականացման արդյունավետ կառավարման սկզբունքային ուղղություններից է ուսանողի՝ կառավարման ազդեցության օբյեկտից դեպի ակտիվ սուբյեկտ և սեփական սոցիալական զարգացման համակառավարող աստիճանական անցման ապահովումը:

Ուսանողակենտրոն կառավարումը ենթադրում է, որ բուհական սոցիալականացման նպատակները, ծրագրերը և աջակցության մեխանիզմները նախագծելիս հաշվի են առնվում ուսանողների կարիքները, փորձը, հետաքրքրությունները, սոցիալական առանձնահատկությունները և զարգացման հնարավորությունները: Մասնակցային կառավարումը, իր հերթին, նախատեսում է նրանց իրական ներգրավվածությունը ոչ միայն կրթական և հասարակական գործունեության, այլև որոշումների մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում:

Ա. Ասթինի ներգրավվածության տեսության համաձայն՝ ուսանողի զարգացման արդյունքները զգալիորեն պայմանավորված են այն ֆիզիկական և հոգեբանական էներգիայով, որը նա ներդնում է բուհական գործունեության մեջ (Astin, 1984):

Մասնակցային կառավարման կազմակերպական ձևերից են ուսանողական խորհուրդները և ինքնակառավարման մարմինները, գիտական խմբակները, նախագծային և կամավորական գործունեությունը, աշխատանքային խմբերում

ուսանողների ներկայացվածությունը, կրթական ծրագրերի և բուհական միջավայրի գնահատմանը նրանց մասնակցությունը:

Կառավարման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի ուսանողների կարծիքի հավաքագրումից անցումը դեպի համատեղ որոշումների ընդունում և պատասխանատվության բաշխում: Այս դեպքում ուսանողական մասնակցությունը դառնում է ոչ ձևական, այլ իրական կառավարչական մեխանիզմ:

4. Բուհական պատկանելիության զգացման նպատակային կառավարում

Բուհական պատկանելիության զգացումը սոցիալականացման կարևոր արդյունք է և միաժամանակ այն սոցիալ-հոգեբանական հիմքը, որի վրա կառուցվում են ուսանողի ներգրավվածությունը, համագործակցությունը և մասնագիտական նույնականացումը:

Մ. Ահնը և Հ. Դևիսը համալսարանին պատկանելիությունը դիտարկում են որպես բազմաչափ երևույթ, որը ներառում է սոցիալական, միջանձնային և ակադեմիական բաղադրիչներ (Ahn, Davis, 2020): Ուսանողի կողմից իրեն բուհական համայնքի ընդունված, գնահատված և լիարժեք անդամ զգալը մեծացնում է նրա մասնակցության և միջավայրի հետ նույնականացման հնարավորությունները:

Կառավարման տեսանկյունից պատկանելիության զգացումը չի կարող թողնվել ինքնաբուխ ձևավորման: Անհրաժեշտ է ստեղծել դրա զարգացման համար նպաստավոր կազմակերպական և հաղորդակցական պայմաններ, ինչպես նաև վաղ փուլերում բացահայտել սոցիալական մեկուսացման, օտարվածության, միայնության և բուհական միջավայրից հոգեբանական հեռացման ռիսկերը:

Այս ուղղությամբ նպատակահարմար է կիրառել առաջին կուրսեցիների հարմարման ծրագրեր, մենթորական աջակցություն, խմբային և միջկուրսային համագործակցություն, ուսանողական համայնքների զարգացում, դասախոս–ուսանող վստահելի հաղորդակցություն և համալսարանական ավանդույթներին ու արժեքներին մասնակցության հնարավորություններ:

Այսպիսով, բուհական պատկանելիության զգացման նպատակային կառավարումը նշանակում է ուսանողի և բուհական համայնքի միջև կայուն սոցիալական ու արժեքային կապի ձևավորում, պահպանում և ամրապնդում:

5. Մենթորական, թյուտորական և փոխաջակցության համակարգերի կառավարում

Ուսանողի սոցիալականացման տարբեր փուլերում, հատկապես ուսումնառության սկզբնական շրջանում, էական նշանակություն ունի նպատակային մանկավարժական և սոցիալական աջակցությունը: Այդ աջակցության համակարգված կազմակերպումը սոցիալականացման կառավարման ինքնուրույն ուղղություն է:

Ք. Թոփինգի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համակուրսեցիների փոխուսուցումն ու փոխաջակցությունը նպաստում են ոչ միայն ակադեմիական, այլև սոցիալական և հուզական զարգացմանը (Topping, 2005):

Կառավարման տեսանկյունից մենթորությունը չի կարող սահմանափակվել աջակցող անհատների ինքնաբուխ գործունեությամբ: Անհրաժեշտ է հստակեցնել մենթորների ընտրության չափանիշները, նրանց գործառույթները, աջակցություն ստացող ուսանողների կարիքները, փոխգործակցության ձևերը, հանդիպումների պարբերականությունը և արդյունքների գնահատման եղանակները:

Մենթորական համակարգի արդյունավետ կառավարումը ներառում է նաև մենթորների նախապատրաստում, նրանց գործունեության համակարգում, ուսանողների սոցիալական և ուսումնական դժվարությունների վաղ բացահայտում և անհրաժեշտության դեպքում մասնագիտական աջակցության այլ ծառայությունների հետ փոխկապակցում:

Այսպիսով, մենթորական, թյուտորական և փոխաջակցության համակարգերը սոցիալականացման գործընթացում հանդես են գալիս ոչ միայն որպես աջակցության ձևեր, այլև որպես ուսանողի հարմարումից դեպի ինքնուրույն սոցիալական և մասնագիտական գործունեություն անցումն ապահովող կառավարչական մեխանիզմներ:

6. Անհատականացված և տարբերակված սոցիալականացման կառավարում

Ուսանողները բուհ են ընդունվում տարբեր սոցիալական փորձով, մշակութային ֆոնով, արժեքային կողմնորոշումներով, հաղորդակցական կարողություններով, կրթական պատրաստվածությամբ և հարմարման տարբեր տեմպերով: Այդ պատճառով սոցիալականացման միասնական և բոլորի նկատմամբ նույն կերպ կիրառվող միջոցները չեն կարող հավասարապես արդյունավետ լինել:

Ք. Է. Թոմլինսոնի տարբերակված ուսուցման մոտեցումը հիմնավորում է սովորողների կարիքների, պատրաստվածության և անհատական առանձնահատկությունների հաշվառման անհրաժեշտությունը (Tomlinson, 2014): Այս սկզբունքը կիրառելի է նաև սոցիալականացման կառավարման համատեքստում:

Անհատականացված սոցիալականացման կառավարումը սկսվում է ուսանողի նախնական սոցիալական փորձի, կարիքների, դժվարությունների և ներուժի ախտորոշումից: Դրա հիման վրա հնարավոր է տարբերակել աջակցության ինտենսիվությունը, ձևերը և բովանդակությունը:

Կառավարչական գործողությունները կարող են ներառել անհատական խորհրդատվություն, հարմարման ռիսկերի վաղ բացահայտում, սոցիալական մեկուսացման կանխարգելում, տարբերակված մենթորական աջակցություն, խմբային պատկանելիության ամրապնդման միջոցառումներ և անհրաժեշտության դեպքում ուսանողի սոցիալական ու մասնագիտական զարգացման անհատական ուղու նախագծում:

Այսպիսով, անհատականացված և տարբերակված սոցիալականացման կառավարումը հնարավորություն է տալիս ընդհանուր ռազմավարության շրջանակում ապահովել յուրաքանչյուր ուսանողի զարգացման անհատական առանձնահատկությունների հաշվառումը:

7. Թվային սոցիալականացման կառավարում

Թվային միջավայրը ժամանակակից ուսանողի սոցիալականացման ինքնուրույն և ազդեցիկ տարածք է, որտեղ ձևավորվում են հաղորդակցական սովորույթներ, սոցիալական կապեր, խմբային պատկանելիություն, համագործակցության ձևեր և ինքնաներկայացման մեխանիզմներ:

Ն. Սելվինը կրթական տեխնոլոգիաները դիտարկում է ոչ միայն որպես տեխնիկական միջոցներ, այլև որպես սոցիալական և կազմակերպական հարաբերությունների վրա ազդող երևույթ (Selwyn, 2012): Հետևաբար թվային սոցիալականացումը ևս պահանջում է նպատակային կառավարում:

Կառավարման խնդիրը պետք է լինի ոչ միայն թվային հարթակների հասանելիության ապահովումը, այլ նաև դրանց սոցիալականացնող ներուժի գիտակցված օգտագործումը և հնարավոր ռիսկերի կանխարգելումը:

Թվային սոցիալականացման կառավարման հիմնական ուղղություններն են մեդիագրագիտության զարգացումը, թվային էթիկայի և ակադեմիական բարեվարքության ձևավորումը, պատասխանատու առցանց հաղորդակցությունը, համագործակցային թվային միջավայրերի ստեղծումը, տեղեկատվական անվտանգության ապահովումը, թվային մեկուսացման և կիբերբուլինգի կանխարգելումը:

Այսպիսով, թվային սոցիալականացման կառավարումը ենթադրում է թվային միջավայրի սոցիալական հնարավորությունների և ռիսկերի նպատակային կարգավորում՝ ուսանողի անվտանգ, պատասխանատու և համագործակցային թվային վարքի ձևավորման նպատակով:

8. Տվյալահեն մշտադիտարկում և հետադարձ կապի կառավարում

Սոցիալականացման գործընթացի արդյունավետ կառավարումը հնարավոր չէ առանց դրա ընթացքի, խնդիրների և արդյունքների վերաբերյալ պարբերաբար ստացվող հավաստի տեղեկատվության:

Տվյալահեն մոտեցումը ենթադրում է, որ կառավարչական որոշումները հիմնվում են ոչ միայն փորձի կամ սուբյեկտիվ գնահատականների, այլ համակարգված հավաքագրվող և վերլուծվող տվյալների վրա:

Սոցիալականացման մշտադիտարկման համար կարող են կիրառվել ուսանողական հարցումներ, ներգրավվածության և բուհական պատկանելիության ցուցանիշներ, մասնակցության տվյալներ, դիտարկումներ, ինքնագնահատում, անհատական և խմբային հարցազրույցներ, ակադեմիական առաջընթացի և սոցիալական վարքի համադրական տվյալներ:

Սակայն տվյալների հավաքագրումն ինքնին դեռևս կառավարում չէ: Դրանց արժեքը դրսևորվում է միայն այն դեպքում, երբ վերլուծության արդյունքում բացահայտվում են խնդիրներ կամ ռիսկեր, ընդունվում են համապատասխան կառավարչական որոշումներ և իրականացվում են ճշգրտող գործողություններ:

Այսպիսով, տվյալահեն մշտադիտարկումը և հետադարձ կապի կառավարումը սոցիալականացման գործընթացը դարձնում են չափելի, վերահսկելի և կառավարչական ճշգրտման ենթակա:

9. Բուհ–հասարակություն–գործատու համագործակցության ռազմավարական կառավարում

Ուսանողի սոցիալական և մասնագիտական ինտեգրումը չի կարող ամբողջությամբ ձևավորվել միայն բուհի ներքին միջավայրում: Մասնագիտական սոցիալականացումը պահանջում է ուսանողի ներգրավում իրական սոցիալական, մասնագիտական և հասարակական հարաբերությունների համակարգում:

Հ. Էցկովիցի համալսարան–արդյունաբերություն–պետություն փոխգործակցության հայեցակարգը ցույց է տալիս համալսարանի արտաքին համագործակցության ռազմավարական նշանակությունը (Etzkowitz, 2008):

Կառավարման տեսանկյունից արտաքին համագործակցությունը չպետք է սահմանափակվի առանձին հանդիպումներով կամ պրակտիկաների կազմակերպմամբ: Անհրաժեշտ է ձևավորել գործընկերային հարաբերությունների կայուն համակարգ՝ բուհի, գործատուների, մասնագիտական կազմակերպությունների, համայնքների, հասարակական կառույցների և պետական հաստատությունների միջև:

Այդ համակարգում պետք է հստակեցվեն համագործակցության նպատակները, գործընկերների դերերը, ուսանողների մասնակցության ձևերը, ակնկալվող սոցիալական և մասնագիտական արդյունքները և դրանց գնահատման եղանակները:

Կառավարման գործիքներ կարող են լինել մասնագիտական պրակտիկաները, ստաժավորումները, համատեղ նախագծերը, կամավորական ծրագրերը, գործատուների մասնակցությամբ մասնագիտական քննարկումները, կարիերայի զարգացման միջոցառումները և իրական սոցիալական խնդիրների լուծմանը ուսանողների ներգրավումը:

Այս համագործակցության արդյունքում ընդլայնվում է ուսանողի սոցիալական դերերի դաշտը, ձևավորվում են աշխատանքի շուկայի պահանջներին համապատասխան հաղորդակցական և մասնագիտական-վարքային կարողություններ, ամրապնդվում է մասնագիտական ինքնությունը:

10. Արժեքահեն և քաղաքացիական սոցիալականացման կառավարում

Սոցիալականացման գործընթացի արդյունավետությունը չի կարող գնահատվել միայն ուսանողի հարմարման, հաղորդակցման կամ մասնակցության

կարողություններով: Բարձրագույն կրթության կարևոր առաքելություններից է սոցիալապես պատասխանատու, արժեքային կողմնորոշում և քաղաքացիական դիրքորոշում ունեցող ապագա մասնագետի ձևավորումը:

Շ. Շվարցի արժեքների տեսության համաձայն՝ արժեքներն ուղղորդում են մարդու ընտրությունները, վարքը և սոցիալական հարաբերությունները (Schwartz, 2012):

Հետևաբար արժեքահեն և քաղաքացիական սոցիալականացման կառավարումը պետք է ունենա հստակ նպատակներ և արտահայտվի ոչ միայն ուսումնական բովանդակության, այլև բուհի կազմակերպական մշակույթի, միջանձնային հարաբերությունների և կառավարչական պրակտիկայի մեջ:

Այս ուղղությամբ կարևոր են ակադեմիական բարեվարքության, սոցիալական պատասխանատվության, ժողովրդավարական մշակույթի, փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության, արդարության, մասնագիտական էթիկայի և քաղաքացիական մասնակցության զարգացումը:

Արժեքային սոցիալականացման արդյունքները նպատակահարմար է գնահատել ուսանողների վարքային դրսևորումների, ակադեմիական բարեվարքության, կամավորական և քաղաքացիական մասնակցության, սոցիալական պատասխանատվության և մասնագիտական-էթիկական դիրքորոշումների միջոցով:

Այսպիսով, արժեքահեն և քաղաքացիական սոցիալականացման կառավարումը նպատակաուղղված է ոչ միայն արժեքների փոխանցմանը, այլև դրանց ինստիտուցիոնալ ամրապնդմանը և ուսանողի իրական սոցիալական վարքում դրսևորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կարող ենք փաստել, որ վերոնշյալ կառավարման ուղղությունները միմյանցից մեկուսացված չեն: Համակարգային-ռազմավարական կառավարումը ձևավորում է ընդհանուր նպատակներն ու առաջնահերթությունները, սոցիալ-կրթական էկոհամակարգի կառավարումը՝ դրանց իրականացման միջավայրը, ուսանողակենտրոն և մասնակցային կառավարումը՝ ուսանողի սուբյեկտայնությունը, բուհական պատկանելիության և մենթորական համակարգերի կառավարումը՝ սոցիալական ինտեգրումը, անհատականացված և թվային կառավարումը՝ գործընթացի ճկունությունն ու ժամանակակից միջավայրին համապատասխանությունը, տվյալահեն մշտադիտարկումն ու հետադարձ կապը՝ գործընթացի վերահսկելիությունը, արտաքին գործընկերային համագործակցության կառավարումը՝ մասնագիտական սոցիալականացումը, իսկ արժեքահեն և քաղաքացիական կառավարումը՝ ամբողջ գործընթացի սոցիալական, բարոյական և քաղաքացիական ուղղվածությունը:

Այսպիսով, բուհում ուսանողների սոցիալականացման արդյունավետ կառավարման առանձնացված ուղիները կազմում են մեկ փոխկապակցված ռազմավարական համակարգ, որի ընդհանուր նպատակը ուսանողի զարգացման հետևյալ շարժընթացի ապահովումն է՝ հարմարում → բուհական պատկանելիություն → ներգրավվածություն → մասնակցություն → սոցիալական պատասխանատվություն → մասնագիտական նույնականացում → ինքնակարգավորում և մասնագիտական ինքնորոշում:

Նշված կառավարման ուղիների համակարգված իրականացումը տեսական և կազմակերպական հիմք է ստեղծում բուհում ուսանողների սոցիալականացման գործընթացի արդյունավետ կառավարման կազմակերպական-մանկավարժական պայմանների, կառավարման մեխանիզմների և արդյունավետության գնահատման չափանիշների հետագա հիմնավորման համար:

Հետազոտության վերջնարդյունքները:

Կատարված տեսական և համադրական վերլուծության արդյունքում՝

- համակարգվել են բուհում ուսանողների սոցիալականացման գործընթացի արդյունավետ կառավարման հիմնական ուղղությունները՝ համակարգային-ռազմավարական, սոցիալ-կրթական էկոհամակարգի, ուսանողակենտրոն և մասնակցային, բուհական պատկանելիության, մենթորական և փոխաջակցության, անհատականացված, թվային, տվյալահեն, գործընկերային, արժեքահեն և քաղաքացիական կառավարման համատեքստում,
- բացահայտվել է նշված կառավարման ուղղությունների փոխկապակցված և փոխլրացնող բնույթը՝ որպես բուհի կրթական կառավարման միասնական համակարգի բաղադրիչներ,
- հիմնավորվել է սոցիալականացման կառավարման փուլային-ցիկլային տրամաբանությունը՝ ախտորոշումից և նպատակադրումից մինչև մշտադիտարկում, հետադարձ կապ, կառավարչական ճշգրտում և ինքնակարգավորում,
- որոշարկվել են ուսանողների սոցիալականացման արդյունավետ կառավարման կազմակերպական-մանկավարժական պայմանների և կառավարման մեխանիզմների հիմնական շրջանակները,
- սահմանվել է սոցիալականացման ակնկալվող արդյունքների հաջորդականությունը՝ հարմարում → բուհական պատկանելիություն → ներգրավվածություն → մասնակցություն → սոցիալական պատասխանատվություն → մասնագիտական նույնականացում → ինքնակարգավորում և մասնագիտական ինքնորոշում,
- ձևակերպվել է սոցիալականացման կառավարման արդյունքների գնահատման տրամաբանությունը՝ ուսանողի սոցիալական զարգացման

վերաբերյալ տվյալների, հետադարձ կապի և դրանց հիման վրա իրականացվող կառավարչական ճշգրտումների փոխկապակցմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ahn, M. Y., & Davis, H. H. (2020). Four domains of students' sense of belonging to university. *Studies in Higher Education, 45*(3).

Astin, A. W. (1984). Student involvement: A developmental theory for higher education. *Journal of College Student Personnel, 25*(4).

Bronfenbrenner, U. (1979). *The Ecology of Human Development*. Cambridge, MA: Harvard University Press.

Etzkowitz, H. (2008). *The Triple Helix: University–Industry–Government Innovation in Action*. New York: Routledge.

Fullan, M. (2016). *The New Meaning of Educational Change* (5th ed.). New York: Teachers College Press.

Schwartz, S. H. (2012). An overview of the Schwartz theory of basic values. *Online Readings in Psychology and Culture, 2*(1).

Selwyn, N. (2012). *Education and Technology: Key Issues and Debates*. London: Continuum.

Tomlinson, C. A. (2014). *The Differentiated Classroom: Responding to the Needs of All Learners* (2nd ed.). Alexandria, VA: ASCD.

Topping, K. J. (2005). Trends in peer learning. *Educational Psychology, 25*(6).

Weidman, J. C., & DeAngelo, L. (Eds.). (2020). *Socialization in Higher Education and the Early Career: Theory, Research and Application*. Cham: Springer.

РЕЗЮМЕ

ПУТИ ЭФФЕКТИВНОГО УПРАВЛЕНИЯ ПРОЦЕССОМ СОЦИАЛИЗАЦИИ СТУДЕНТОВ В ВУЗЕ И ОРГАНИЗАЦИОННО-ПЕДАГОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ

Лилит Манукян

В статье рассматриваются теоретические, организационные и педагогические пути повышения эффективности управления процессом социализации студентов в высшем учебном заведении.

На основе теоретического анализа систематизированы системно-стратегическое, экосистемное, студентоцентрированное и партисипативное, менторское, индивидуализированное, цифровое, основанное на данных, партнёрское и ценностно-ориентированное направления управления социализацией.

Предлагается авторский подход, согласно которому данные направления должны объединяться в единую поэтапно-циклическую систему управления — от диагностики и целеполагания до мониторинга, управленческой коррекции, саморегуляции и профессионального самоопределения.

Определены организационно-педагогические условия и механизмы управления процессом.

Ключевые слова: *социализация студентов, управление социализацией, университетская среда, студенческая вовлечённость, партисипативное управление, менторство, чувство принадлежности, цифровая социализация, профессиональная идентичность.*

SUMMARY

WAYS OF EFFECTIVE MANAGEMENT OF UNIVERSITY STUDENTS' SOCIALIZATION AND ORGANIZATIONAL-PEDAGOGICAL CONDITIONS

Lilit Manukyan

The article examines theoretical, organizational, and pedagogical ways of improving the management of university students' socialization. Socialization is regarded as a purposeful, continuous, and manageable process integrating academic adjustment, social engagement, professional identity formation, value orientations, self-regulation, and a sense of belonging to the university community.

The article also specifies the organizational-pedagogical conditions and management mechanisms required for effective socialization. It is argued that the outcomes of socialization should be assessed through an integrated set of indicators reflecting adaptation, engagement, belonging, cooperation, social responsibility, professional identity, and self-regulation.

Keywords: *student socialization, higher education, socialization management, university environment, student engagement, participatory governance, mentoring, sense of belonging, digital socialization, professional identity.*

Հոդվածը սրացվել է՝ 28.08.2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 30.08.2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 22.10.2026